# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԿՈՏՈԼՅԱՆԻ, ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՐԹՈՒՐ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԵՎ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՓՈՐՁԱԳԵՏ ԼԻԱՆՆԱ ԱՆԱՆՅԱՆԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 20-25-Ը ՆԵՐԱՌՅԱԼ ԹԱԻԼԱՆԴԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ (ԲԱՆԳԿՈԿ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**

Արմեն Կոտոլյան – ՀՀ Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի (այսուհետ՝ ՇՎՏՄ) ղեկավար,

Արթուր Մկրտչյան – ՇՎՏՄ ղեկավարի տեղակալ,

Լիաննա Անանյան – ՇՎՏՄ փորձագետ:

**2. Գործուղման վայրը և ժամկետները.**

Թաիլանդի Թագավորություն (Բանգկոկ), 2026թ. հուլիսի 20-25-ը ներառյալ:

**3.Հրավիրող կողմը.**

Թաիլանդի Թագավորության Սպառողների պաշտպանության խորհրդի գրասենյակ (OCPB, Office of the Consumer Protection Board):

**4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Խթանել Հայաստանի Հանրապետության և Թաիլանդի Թագավորության միջև սպառողական ապրանքների անվտանգության՝ ոչ պարենային ապրանքների, սպառողների պաշտպանության և շուկայի վերահսկողության ոլորտներում սերտ ու նախաձեռնողական համագործակցության ձևավորումը, ինչպես նաև փորձի փոխանակումը:

**5. Քննարկված թեմաները.**

- Սպառողների պաշտպանության խորհրդի գրասենյակի (OCPB, Office of the Consumer Protection Board) գործառույթները, կառուցվածքը
- Թվայնացում
- Անդրսահմանային շուկաների աճող բարդություն
- Սոցիալական մեդիայի ազդեցությունը և կայունության վերաբերյալ մտահոգությունները, հաշվետվողականության ապահովումը

- Էլեկտրոնային առևտրի հարթակների և արտասահմանյան վաճառողների գործունեությունը, արտերկրում սպառողների իրավունքների պաշտպանության և դրանց կիրարկման հետ կապված մարտահրավերները, ինչպես նաև միջազգային համագործակցության ամրապնդման անհրաժեշտությունը:
- Կարգավորումների և վերահսկողական մեխանիզմների ամրապնդումը, սպառողների իրազեկվածության բարձրացումը, միջոլորտային համագործակցության խթանումը, ինչպես նաև նոր տեխնոլոգիաների, այդ թվում՝ արհեստական բանականության հնարավորությունների օգտագործումը:

**6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Միջոցառումն իրականացվել է խոսնակների ելույթների, քննարկումների և հարցուպատասխանի ձևաչափով:

ՀՀ Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավար պարոն Արմեն Կոտոյանի գլխավորած պատվիրակությունը ներկայացրել է Տեսչական մարմնի գործունեությունը, հիմնական գործառույթները, կառուցվածքը և վերահսկողության ոլորտների շրջանակը:

Թաիլանդի գործընկերներն իրենց հերթին ներկայացրել են իրենց ղեկավարած կառույցի գործառույթները, վերահսկողության շրջանակը, առկա մարտահրավերներն ու հետագա զարգացման ուղղությունները: Հանդիպման ընթացքում խոսնակներին ուղղվել են տարբեր հարցեր՝ իրենց մարմինների կողմից իրականացվող ստուգումների, վերահսկողական ընթացակարգերի և կիրառվող մեխանիզմների վերաբերյալ:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են համագործակցության զարգացման մի շարք ուղղություններ, այդ թվում՝ վտանգավոր արտադրանքի նկատմամբ վերահսկողության վերաբերյալ տեղեկատվության փոխանակումը, ռիսկերի կառավարման համակարգերի զարգացումը, ինչպես նաև կարողությունների զարգացումը՝ գիտելիքների փոխանակման, վերապատրաստումների և արտադրանքի փորձարկման ու անվտանգության վերահսկողության ոլորտներում մասնագետների հմտությունների կատարելագործման միջոցով:

Միաժամանակ, երկկողմ հանդիպման շրջանակում Տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոյանը թաիլանդական կողմի հետ քննարկել է երկու երկրների միջև

համագործակցության ընդլայնման հնարավորությունները նաև այլ ոլորտներում: Մասնավորապես, անդրադարձ է կատարվել գյուղատնտեսական և այլ ապրանքների մուտքը դեպի ասիական շուկաներ խթանելու և դյուրացնելու անհրաժեշտությանն ու կարևորությանը:

Ընդգծվել է Հայաստանի Հանրապետության համապատասխան մարմինների պատրաստակամությունը՝ համագործակցության առավել լայն շրջանակ ձևավորելու հարցում: Թաիլանդի գործընկերները նշել են, որ հնարավոր զարգացումները կքննարկեն համապատասխան գերատեսչությունների հետ՝ համագործակցության և զարգացման հեռանկարները գնահատելու նպատակով:

Կողմերը փոխանակել են տեսակետներ և վերահաստատել իրենց հանձնառությունը՝ ամրապնդելու երկկողմ հարաբերություններն ու զարգացնելու գործնական համագործակցությունը, որը կնպաստի արտադրանքի անվտանգության և սպառողների պաշտպանության միջազգային չափանիշների հետագա կատարելագործմանը:

Տեսչական մարմինն իր հերթին, լրացուցիչ տեղեկատվություն ստանալու դեպքում, այդ մասին կտեղեկացնի ՀՀ Արտաքին գործերի նախարարությանը:

**7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Հանդիպման ընթացքում Թաիլանդի Թագավորության Սպառողների պաշտպանության խորհրդի գրասենյակն (OCPB) առաջարկել է ՇՎՏՄ-ի և OCPB-ի միջև ստորագրել համագործակցության հուշագիր, սակայն այդ հարցը դեռևս գտնվում է հստակեցման փուլում:

Հետագա զարգացումների վերաբերյալ Տեսչական մարմինը կտեղեկացնի ՀՀ Արտաքին գործերի նախարարությանը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև այլ շահագրգիռ կողմերի:

Հանդիպման շրջանակում որևէ փաստաթուղթ չի ստորագրվել:

**8.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Հուշագրի կնքման հետ կապված հնարավոր զարգացումների շրջանակում քննարկվել է նաև թաիլանդական կողմի՝ Հայաստանի Հանրապետություն այցի տարբերակը: Այցի ընթացքում գործընկերները հնարավորություն կունենան հանդիպումներ անցկացնելու շահագրգիռ մարմինների առավել լայն շրջանակի հետ և գնահատելու այլ ոլորտներում համագործակցության զարգացման հնարավորությունները:

**9. Ստորագրությունը, ամսաթիվը:**

30.07.2026թ.

X _____